


ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ, ԹԻՒ Զ

1 Մայիս 1890



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՂՏԱՏԵԱՆ

Փողոց Սուրբան Համաթ, Թիւ 14

1890

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. Ս. ԳՐՈՅ ՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՍՄՈՒՆՔ. «Գործք Առաքելաց» եւ Պօղոսի Առաքելոյ առ Գաղատացիս բուրբն :
2. ՏԱՆԳԷ. Մաքսաւան. երգ երկրորդ. — Քարզմ. Հ. Դաւիթ Վ. Նազարեկեան :
3. ԳՐԱԳԱՏԱԿԱՆ. Փուրբերէն. — Հ. Սերովրի Վ. Տերվիշեան :
4. ՊԻՍԻԳԵԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՎԱՐՔՆ եւ իւր Վեցորեայ գրուածքին հայերէն քարգմանութիւնն եւ ձեռագիրը :
5. ՆՈՐԻՆ ՎԵՅՈՐԵԱՅ :

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Առաջին տարի

թիւ 2

1 Մայիս 1890

Ս. ԳՐԹՅ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌԻՍՄՈՒՆՔ

« ԳՐԹՔ ԱՌԱՔԵԼՈՅ » ԵՒ ՊՕՂՈԱԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌ ԳԱՂԱՏԱՅԻՍ ԲՈՒՂՅՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ . — « Դործք Առաքելոց »-ի դէմ յարձակումներ . — Դուպինկէնի եւ Բընանի դպրոցն . — Ղուկաս Աւետարանչի դիմանց դէմ ամբաստանութիւնը . — Ստուծիւն այս ամբաստանութեանց . — Բնդունելութիւն հեթանոսացի Քրիստոնէութիւն ի ձեռն Պետրոսի Առաքելոյ . — Կուռնեքիոս հարիւրապետն . — Քրիստոնէութեան զարձած հեթանոսաց Մովսիսական օրինաց լուծէն ազատիլը . — Անտիոքոյ վէճը . — Հրեայք Քրիստոնէութեան դառնալէ յետոյ օրինական պատուէրները պահելու պարտաւորեալ չեն . — Կատարեալ համաձայնութիւն « Դործք Առաքելոց »-ի եւ « առ Գաղատացիս » թղթին մէջ :

Ա .

Բանապաշտ (rationaliste) քննադատք « Դործք Առաքելոց »-ի վաւերականութիւնը ուրանալ չեն համարձակիր , վասն զի իւր հեղինակութիւնը անդիմադարձ է , բայց սակայն դէնքնիկեց չեն ըլլար . և որովհետեւ Մատենադարին պատմութեան հաւատարմութեան դէմ չեն կրնար մաքառիլ , անոր դիմանց հակառակ ամբաստանութիւններ կը բարդեն : Դիտմամբ , կ'ըսեն , Ղուկաս Աւետարանիչ իւր ժամանակի դէպքերն խեղաթիւրած է , և անոնց խաբուսիկ գոյն և ձև տուած է : Քրիստոնէութեան ծագումը մեկնելու դիտմամբ , կ'ըսեն , « Դործք Առաքելոց »-ն մէկ կողման գրութիւն մ'է , ջանացող հաշտեցնելու և ի մի ձուլելու իրեն հակա-

ևակ եղող կուսակցութիւնը, որ Քրիստոսի աշակերտաց մէջ
կազմուած էր, և որք ի սկզբն անդ անհաշտ էին իրերաց
հետ, այն ինքն է Պետրոսի և Պօղոսի կողմնակցութիւնը :
Պառէր Գերմանացին հնարեց այս մեկնարանութիւնը ի Գեր-
մանիա, որ և յետոյ Դուսլինկէնի դպրոցին դրութեան հիմն
եղաւ : Թէպէտև այժմ շատեր կը հերքեն իւր տեսութեանց
մեծ մասն, որք երբեմն նորամուտ ինչ եղած էին, այսու
ամենայնիւ կան շատեր ալ բանապաշտից մէջ, ինչպէս Բը-
նան, որք այս մեկնարանութեան ալ դիմեն Ղուկասու Ա-
ւետարանչի գործոյն յարգը ազարտելու համար :

Ահաւասիկ «Ծագումն Քրիստոնէութեան» հեղինակին
այս նիւթիւ վրայ դրածը .

«Գործք Առաքելոց» ի ոգին համանման է երրորդ Աւե-
«տարանի ոգւոյն . քաղցրութիւն, ներդաժանութիւն, հաշ-
«տութիւն, խոնարհաց համակրութիւն, ամբարտաւանից
«դէմ տեսելութիւն : . . . Իւր զիրքը Հռովմէական Եկեղեցւոյ
«ոգւոյն առաջին գրաւոր հաւատարմքն է, իրաց ճշմարտու-
«թեան վրայ անտարբեր, և միայն պաշտօնական ձգտմանց
«յամենայնի հետամուտ : Ղուկաս հիմնադիրն է այն յաւի-
«տենական կեղծեաց զոր եկեղեցական պատմութիւն կ'ա-
«նուանեն, իրեն անհամութիւններով, խոչ և խութերն
«հարթելու սովորութեամբն և կեղծաւորեալ բաշխաշտու-
«թեան հետամուտութեամբ : Իւր մատենագրութեան հիմն է
«ի յառաջագոհն (à priori) վարդապետութիւն մը, միշտ
«խոհեմ և միշտ մեղմ : Ղուկասու էական վախճանն է ասպա-
«ցուցանել թէ Պօղոսի աշակերտք ինքնամուխ սպրդող վար-
«դապետի աշակերտք չեն, այլ հաւատար միւս աշակերտաց
«և անոնց հետ հաղորդակից . ա՛յլ ամեն բան իրեն համար
«կարեւորութիւն չունի . ամենայն ինչ իւր հովուերգու-
«թիւն մ'է : Կ'ուզէ ցուցնել թէ հիմնաբար Պետրոս հա-
«մամիտ էր Պօղոսի, և սա՝ Պետրոսի : Իսկ պատմագրութեան
«նկատմամբ, «Գործք Առաքելոց» ի բովանդակութիւնը մէկ-
«մէկէ բացարձակապէս որոշ երկու տեսակէտով նկատելու
«է . նախ թէ Ղուկաս՝ Պօղոս Առաքելոյ կենսագրութիւնը
«կ'ընէ, որոյ վրայ անձնական տեղեկութիւններ ունէր .
«երկրորդ՝ թէ Երուսաղեմի Եկեղեցւոյ առաջին տարինե-
«րուն նկատմամբ իւր տեսնուած սովորական եղած տեսու-
«թիւնը մեզ կ'ընծայէ : Այն առաջին տարիներն իւր հեռա-

« Լոր կրկներեւոյթ մ'են , լի պատրանօք . Դուկաս չէր գըտ-
« նուէր նպատաւոր վիճակի մը մէջ այս անհետացեալ աշ-
« խարհքը իմանալու և թափանցելու համար » :

Ահաւասիկ շատ մը խօսք և նախատինք իսկ , բայց ո՞ր
են ապացոյցք : Բընան չականած էր ասելու թէ Դուկաս որ
Պօղոսի ընկերն էր և Առաքելոց ժամանակակից և ընկերա-
կից , հմուտ ի լեզուս և ի գիտութեան , այն անհետացեալ
աշխարհը հասկնալու համար նպատաւոր վիճակի մէջ չէր
գտնուէր : Իսկ ինքն Բընան քննադատ՝ որ հազար ութ-
հարիւր տարի ետքը աշխարհք եկած է , միթէ աւելի՞ նը-
պատաւոր դրից մէջ կը գտնուի այն անհետացեալ աշ-
խարհը թափանցելու , այն ատենուան պատմագրաց վրայ
դատաստան ընելու , և իրենց պատմածներուն մէջն ճիշդը
և անճիշդը սրոյշելու համար :

Այժմեան քննադատութիւնն նոր գրաւոր հաստատիք
մը , նոր բնագիր մը երեւան հանած չէ . իր գիտցածն ա-
ռաջնոց ծանօթ եղածներն են . ի՞նչպէս կրնայ պնդել թէ
ինքն այն դէպքերը լաւ եւս գիտէ՝ քան թէ նոյն դիպուա-
ծոց ժամանակակից երեւելի պատմագիրներն : Մի միայն իւր
ճարտարութիւնն՝ այն բնագիրն առ հասարակ ըստ իւր տե-
սութեանց մեկնելն է , այսինքն խեղաթիւրել : Կարգանք
հիմա բռնապաշտից դպրոցի մեկնաբանութիւնքը « Գործք
Առաքելոց » ի նկատմամբ , զոր Բընան հետեւեալ եղանակաւ
յառաջ կը բերէ :

« Գլխաւոր նիւթն զոր ի նկատ առած ենք , կ'ըսէ Բը-
« նան , և « Գործք Առաքելոց » ի հեղինակութեան նկատմամբ
« եղած զատաքննութեան լուսաւոր կէտն այն համեմատու-
« թիւնն է զոր պէտք է ընել « Գործոց » և « առ Գաղատա-
« ցիս » նամակին մէջ՝ թլխատութեան նկատմամբ գտնուած
« հաստածներուն մէջ : Ըստ « Գործոց » պատմութեան՝ Հը-
« րէաստանէն Անտիոք եկող եզրարք կը պնդէին թէ հեթա-
« նոսութեանէ դարձողներուն համար թլխատութիւնը հար-
« կաւոր էր . ասոր վրայ Պօղոսէ և Բառնարասէ բաղկացեալ
« պատուիրակութիւն մը Անտիոքէն յերուսաղէմ՝ կ'առաքուի ,
« Առաքելոց խորհուրդ հարցընելու համար . այս պատուի-
« րակութիւնն ամենայն խնամք կ'ընդունուի յերուսաղէմ և
« մեծ ժողով մը կը գումարուի : Հազիւ թէ ստորածայն կար-
« ծիք յերեւան կ'ելլեն , փոխադարձ սիրոյ զեղմամբ անհետ

« Կ'ըլլայ տարածայնութիւնը : Պետրոս ձիւղ նոյն խորհուրդը
« կը յայտնէ , ինչ որ Պօղոսի բերնէն և լեզուէն կ'սպասուէր ,
« այսինքն թէ հեթանոսութենէ դարձողներն Մովսիսական
« օրինաց ներքոյ անկեալ չեն : Յակորոս նոյն կարծիքը կը
« հաստատէ , ամենաթեթեւ սեղմամբ մը . Պօղոս չի խօսիր ,
« և յիրաւի պէտք ալ չունի խօսելու , վասն զի իւր վար-
« դապետութիւնը Պետրոսի լեզուաւ հաստատութիւն կը
« գտնէ . ոչ ոք կը պաշտպանէ Հրէաստանէ եկած եղբարց
« կարծիքը . Յակորոսի կարծեաց համաձայն վճիռ մը կը
« տրուի և այն վճիռն առանձին պատուիրակաց ձեռօք ե-
« կեղեցեաց կը ծանուցուի :

« Համեմատենք հիմայ այս պատմութիւնը Պօղոսի « առ
« Գաղատացիս » գրած թղթոյն մէջ գրուածին հետ : Պօղոս
« այս անգամ իւր յերուսաղէմ ճամբորդութիւնն իրր ինք-
« նաշարժ գործ մը , նա մանաւանդ աստուածային յայտ-
« նութեան իրր հետեւանք մը կ'աւանդէ Գաղատացեաց . ե-
« րուսաղէմ հասնելու ատեն իւր Աւետարանը կը հաղորդէ
« առ որ անկն է , և մասնաւորապէս երեւելի անձանց , « ե-
« րիցանց » հետ կը տեսակցի . զինքը ամենեւին չեն քննա-
« դատեր , բան մը չեն հաղորդեր , միայն կը խնդրեն որ
« երուսաղէմի աղքատները չի մոռնայ : Եթէ Տիտոսի՝ որ
« իրեն հետ ընկերացեալ էր , թոյլ կուտայ որ թշխատուի ,
« « սարդուղաց սուտ եղբարց » ակնածութեան համար է . Պօ-
« ղոս այս առժամանակեայ թոյլտուութիւնը կ'ընէ այդ եղ-
« բարց , բայց անոնց չի հնազանդիր . իսկ « երիցանց » նը-
« կատմամբ Պօղոս նեղութեամբ և իրր հեզութեամբ կը
« խօսի . իրեն նոր բան մը չեն սորվեցուցած , մանաւանդ
« թէ երբ Կեփաո յետոյ Անտիօք կուգայ , Պօղոս կ'ընդգի-
« մաւորէ անոր , « զի դուք սաղտեալ իմն էր » : Ի սկզբան Կե-
« փաո ամենուն հետ անխտիր կ'ուտէր . Յակորոսն պա-
« տուիրակներ կուգան , Պետրոս կը ծածկուի , թշխատեալ-
« ներէն կը խուսափէ . Պօղոս տեսնելով թէ Պետրոս՝ Աւե-
« տարանի ճամբարութեան չիտակ ճամբուն վրայ չի քալէր ,
« բնդդէմ կը դառնայ Կեփաոսի առաջի ամենեցուն և կը
« յանդիմանէ իւր վարմունքը : Պատմութեան տարբերու-
« թիւնն յայտնի է . մէկ կողմանէ հանդիսաւոր համաձայ-
« նութիւն , միւս կողմանէ կեղծեալ զայրոյթ և զիւրա-
« դրդիւ հակակրօթիւն . մէկ կողմանէ ժողով մը , միւս կող-

« մանէ անոր հաւառակը, մէկ կողմանէ վճիռ մը, զոր պաշ-
« տօնապէս ծանուցեալ իշխանութիւն մը կը հաշակէ, միւս
« կողմանէ տարբեր կարծիք, որք անսխալօրէն կը մնան իրե-
« րաց առջեւ առանց զիջողութեան, եթէ ոչ առ երեսս .
« յայտնի է թէ այս կրկին պատմութեանց զո՞րն ընդու-
« նելու է : «Գործք Առաքելոց»ի պատմութիւնն հազիւ հա-
« ւանականութիւն ունի . վասն զի բոտ «Գործոց», Երուսա-
« ղեմի ժողովքին նիւթն էր վէճ մը, որոյ հետեւութիւնը
« չի տեսնուիր . ժողովքը դումարուելու աստէն, երկու ճար-
« տարախօսք ալ այնպիսի ճառ կը խօսին, որ ինչպէս այ-
« լուսա մեզ ծանօթ է, իրենց ընթացից հաւառակն է : Ե-
« րուսաղեմի վերայիչեալ ժողովքին վճիռն անտարակոյս կեղ-
« ծիք ո՞ր է » :

Ահաւասիկ Ղուկասու դէմ ճարտարութեամբ հիւսուած
ամբաստանութիւն մը, որոյ նպատակն ուրիշ բան չէ, եթէ
ոչ «Գործք Առաքելոց»ի պատմութեան ստուգութիւնն երկ-
բայեկի ցուցնեն . պատմութիւնը բոլորովին խեղաթիւրեալ
է մերթ զմերթ եւ մերթ յաւելածով, որք առանձինն
նկատեալ կարեւորութիւն չունին, բայց ճարտարութեամբ
յարդարեալ ըլլալով՝ ընթերցողին վրայ աննպատ տարա-
րութիւն կրնան ընել . դիւրին է սակայն «Գործք Առաքե-
լոց»ի մատենագրական ճշմարտախօսութիւնը սպառնուցա-
նել :

Եւ յիրաւի խի՛ղուկաս ամենեւին հետամուտ չէ Պետ-
րոսի եւ Պօղոսի կողմնակիցները հաշտեցնելու համար իրերն
եւ դէպքերն այլայլելու . Պօղոսի առաքելութիւնն ի ցոյց
հանելու չճգնիր պատմութեան փասիւք . նա՛ զի եթէ Պօ-
ղոսի առաքելութիւնը խնդրոյ տակ ինկնէր, ինչպէս Դու-
սիսկէնի դպրոցն կ'ուզէ ընել, ինքն Ղուկաս առ այս ու-
մենէն զօրաւոր փաստն ընձեռած պիտի ըլլար, վասն զի
Ղուկաս ինքն կը պատմէ թէ Համբարձմանէ խիցայ յետոյ
երբ Առաքելոց գառուն թիւը լրացնելու խնդիրն ելաւ եւ
մասնիչ Յուդայի տեղ ուրիշ ո՞րնորեւ ուրջունն եղաւ,
Պետրոս կանխեց յայտարարելու, թէ ընտրուելիքը պէտք է
որ Քրիստոսի բնկերացած ըլլայ, «Սկսեալ ի մկրտութենէ
Յովհաննու մինչեւ յօրն յորում վերացաւ ի մէնջ» : Պօղոս
Առաքեալ այս յատկութիւնը չունէր : Պօղոսի դարձն քիչ
մը յետոյ Ղուկաս կը պատմէ թէ Պետրոս նոր ճառախօ-

սու թեան մը մէջ Բրիտտոսի յարութեան « յառաջագոյն ընտրեալ վկայք » կը կոչէ զանոնք , « սր Բրիտտոսի հետ կերան եւ արբին յետ յարութեան նորա ի մեռելոց » : Արդ՝ Պօղոս Առաքեալ այս կարգի աշակերտներէ ալ չէր : Դուկաս պարտաւորեալ չէր այս խօսքերս իւր պատմութեան մէջ յարելու . եթէ զանց չըրաւ այս յիշատակութիւնը , յայտնի է թէ չունէր ամենեւին այն գիտաւորութիւնը զոր հակառակորդք իրեն կը սեպհականեն , այլ հետամուտ էր միայն ճշմարտութիւնն ի մէջ ածելու :

Նոյնպէս Դուկաս չէ ամենեւին մտադիր հրէամիտները մարդահաճելու , զանոնք հելլենամիտներուն հետ հաշտեցընելու զխոմամբ . ընդհակառակն միշտ չրէից յամառութիւնն եւ կամաւաւորութիւնը երեսնին կը զարնէ , զոր անտարակոյս չընելու էր , եթէ Դուկանկէնի դպրոցին իրեն յանիրաւի վերադարձ միտումը ունեցած ըլլար : Արդէն իւր առաջին բանախօսութեան մէջ Պետրոս՝ ըստ պատմելոյ Դուկասու , չրէից երեսին կը զարնէ Փրկչին դէմ՝ բոլոր ըրածնին : Սուրբ Ստեփանոս զանոնք « խտապարանոց եւ անթիւիտ սրտիւք եւ տկանջօք , Հոգւոյն Սրբոյ հանապաղ հակառակող » կ'անուանէ , Պօղոս նոյն ինքն Յսայի Մարգարէի ըսածներն չրէից կը ստաշաճեցնէ . « Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ , եւ տկանջօք իւրեանց ծանունս լուան եւ զաչս իւրեանց կախուցին , զի մի երբէք տեսանիցեն աչօք եւ լուիցեն տկանջօք » :

Արդ՝ ի՞նչպէս շնար է համարիլ թէ այդպիսի պատմագրութիւն մը զհրէամիտսն Պօղոսի գաղափարներուն հաշտեցնելու զխոմամբ յօրինուած ըլլայ , մինչդեռ Պատմագիրն զչրէաներն այնչափ անխնայ կը հարուածէ : Բայց պիտի առարկուի թէ Դուկասու լեզուն ի՞նչ որ ըլլայ , Պօղոսի ընդ Պետրոսի ունեցած յարաբերութեան ուրիշ ձեւ կուտայ՝ քան ինչ որ Պօղոս . եւ երբ Նրոսապեմի Ժողովքին պատմադիրն Դուկաս՝ այս երկու գլխաւոր Առաքեալներն համամիտ կը ներկայացնէ , Պօղոսի « առ Գաղատացիս » թուղթը այս երկուքը բոլորովին այլամիտ կը ցուցնէ :

Սուրբ Մեկնիչներէ ոմանք այս առարկութիւնը յարմատոց լուծելու համար Գաղատացւոց թղթոյն մէջ յիշեալ Կեփասը , որուն Պօղոս դէմ ելաւ , Առաքելապետ Պետրոսն չէր , այլ նոյն անունը կրող ուրիշ աշակերտ մ'էր , կ'ըսեն :

Մենք այս մեկնութեան կողմնակից չենք, վստահ չիմենալ չենք համարիր զայն. բայց եւ այսու դիւրին է ապացուցանել թէ Դուպլինկէնի դպրոցի բարդած առարկութիւններն երկու հոմաբանութեանց եւ մի անճիշդ պատմութեան վրայ հիմնուած են. զայս ի յայտ ածելու համար բաւական է իրաց եւ դիպումածոց կանոնաւոր շարքն ի մէջ բերել. այն ատեն ինքնին անհետ կ'ըլլան առարկութիւնք:

Երբ Առաքեալք Քրիստոնէութիւնը քարոզելու սկսան, հեթանոսաց դարձին խնդիրն խոյն իրենց առջեւը ելաւ. պէ՞տք էր արդեօք զանոնք ընդունել նորահաստատ Եկեղեցւոյ մէջ. եթէ ընդունելի ըլլային՝ միթէ հարկ էր պարտաւորել զանոնք Մովսիսական օրինաց պահպանութեան, եւ ի մասնաւորի թրիստութեան, ինչպէս Հրէութենէ դարձող հեթանոսք կը թրիստուէին: Վերջապէս եթէ նորադարձ հեթանոսք Մովսիսական օրէնքէ ազատ մնային, քրիստոնէութեան դարձող Հրէայք նոյնպէս ազատ պիտի մնային թէ ոչ:

Ասոնք շատ ծանր խնդիրներ էին եւ ասոնց լուծմանէն կախեալ էր նորահաստատ Եկեղեցւոյ ապագայն. այս խնդիրներու հետզհետէ լուծումն առին ամենայն իմաստութեամբ, եւ Քրիստոսի եւ իւր Աւետարանի ոգւոյն համաձայն եղանակաւ:

Ինչպէս այսպիսի խնդիրներու մէջ սովորաբար կը պատահի, նոր Քրիստոնեայներուն մէջ ոմանք ժխտական եւ ոմանք ալ հաստատական կողմը բռնեցին. Փարիսեցւոց մէջ ամենէն աւելի նախանձախնդիրքն աններող գտնուեցան. իսկ Առաքեալք ամենքն ալ առանց բացառութեան՝ հեթանոսաց Մովսիսական օրինաց պահպանութենէ ազատ ըլլալուն կողմը բռնեցին. պատմութիւնը զայս կը հաւաստէ: Առաքելոց եւ Պօղոսի մէջ սկզբանց ընդունելութեան կամ հետեւելու մասին ամենեւին բաժանում մը տեղի չունեցաւ. ո՛չ Պետրոսեանք կային եւ ոչ Պօղոսեանք. Պետրոս եւ Յակոբոս Պօղոսի կարծիքն ունէին. այսպիսի պայծառ խնդիր մը կարելի չէ որ միապէս խեղաթիւրեալ պատմութեամբ մը:

*

Շարունակելի

Տ Ա Ն Դ Է

Մ Ա Ք Ր Ա Ր Ա Ն

Ե Ր Գ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Էր ապաքէն Արփայն հասեալ 'ի ծիր երկրի ,
Ոյր բոլոր միջօրային պարածածկէ
Զերուսաղէմ 'ի ծայրագոյն իւր բարձրութեան .
Նւ գիշեր որ հակառակ այնմ հոլովի ,
Նլանէր 'ի Դանգիսէ կըռովն 'ի դուռս ,
Որք յերկարելըն անկանին յիւրոց ձեռաց .
Այնպէս զի այսք շուշանափայլ եւ ծիրանի
Հրաշագեղ Արշալուսայն՝ անդ 'ի կայիս ,
Փոխէին սասիկ անմամբն 'ի շիկագոյն :
Առ ծովափամբն երկայնածից էաք մեք դեռ ,
Պէս գունակ որոց յուլին իւրեանց խորհին ,
Դիմելով սրբիւք յառաջ , մարմնովն անշարժ .
Նւ անա՝ զերդ 'ի մօտէլ առաւօտ
Արէս 'ի քանձր շոգոյիս շառագունի
Ի վերայ դաշի ծովուն յարեմաքից ,
'Նոյնպէս տեսի , դարձեալ իցի՛ւն էր տեսնել ,
Լոյս իմն ընդ ծովն յառաջել գալ այնպէս երազ ,
Զի խաղացիցն ոչ գան 'ի կէիւ եւ ոչ մի քոխչ :
Յորմէ հազիւ զակամողիս իմ բաժանեալ
Սակաւուք , առ զԱռաջնորդն իմ հարցանել ,
Տեսի անդէն պայծառագոյն զայն եւ մեծ յոյժ :
Զորով ապա փայլասակէր շուշանակի
Զըգիտեմ զի՛նչ ըսպիսակ , եւ 'ի ներուս
Նլանէր ասկաւ ասկաւ երկրորդ իմն այլ :
Ուսուցիչն իմ մինչեւ ո՛չ երևեցան
Ըսպիսակ քեւն առաջինք՝ եկաց անշարժ .
Իսկ իբրեւ քաջիկ ծանեալ ըզմաւուրդիւն ,

Հա՛պա, օ՛ն, ծուճը կըրկնեա, աղաղակեաց.
Անա Հրեշտակն էին. ըզձեռսըդ ամփոփեա.
Այսպիսիս տեսես բանքես յայսմնէսէ:
Տե՛ս գի ապալս առնէ՛ զկազմաճրս մարդկեպէս.
Ոչ խառնելիս կամի կամ ա՛յլ ինչ առագաս
Քան զիւր քեւս ՚ի բացակայ յայս ծովափունս:
Տե՛ս զիա՛րդ զայնս ուրիւսքերձ ունի յերկինս,
Հախրելով յաւերժական փետրովքն ընդ օդ,
Որք ոչ փոխին իբրեւ ըզմորք մահկանացու:
Ի մերձեակն ապա առ մեզ գամ քան ըզգամ
Լուսափայլէր տակաւ բրոշունն աստուածային,
Ռում ոչ հանդուրժեցին աչք ՚ի մօտոյ,
Այլ ՚ի վայր անկան խոնարհ. եւ նա եկն յափն
Ի տես մի նըրքեցի եւ քերել ցա՛յն՝
Զի չէր ՚ի ջուրն խկ խորամուխ ամենեւին:
Կայր ՚ի խելքս նաւավարն երկնացեղիկ
Ա՛յնպէս՝ զի բուէր գերերջանիկ պատկերագիր,
Եւ ՚ի ներքոյ էին հոգիք քան ըզհարխւր:
Յերանելն Խորայելի յեգիպտոսէ
Երգէին ամենեքեան միաբարբառ,
Ըզատմասըն զայն ՚ի բուն հանեալ ՚ի գլուխ:
Յե՛տոյ կընէաց զայնս ՚ի նըշան սրբոյ խաչի,
Եւ քափեցան միահամուռ յեզրւոր ծովուն,
Եւ մեկնեցաւ նա՝ որպէս եկն երազապայ:
Բազմամբոյսն անդ մընացեալ բլուէր վայրացն
Աննրմուս, աչս ածելով ամենուրեք
Հանգոյն առն՝ որ գրննիցէ ըզմոր իմն ինչ:
Ամենուս Արեւ ըզքիւ հառագայքէր,
Ռոյ էր կաշձակնացայս իւր նըշուխւք
ԶԱյծեղջիւրն ՚ի միջոցէն երկնից վանեալ:
Ըզնակասն ամբարձ ՚ի մեր կոյս նորն որեար
Ասելով՝ եթէ գիտէք, աղէ՛ր ցուցէք
Ըզնանապարհն՝ որ ածիցէ ՚ի լեռնակողմն:
Եւ ես Վիրգիլ պատասխանի. Դուք կարծիցէք
Ինչ արդեօք զի քաջավարժ իցեմք տեղոյս,
Բայց պանդուխտ եմք իբրեւ զձեզ եւ մեք ինքնին:
Քան ըզձեզ սուղ ինչ յառաջ եկաք այսրէն
Ընդ ա՛յլ ուղի, որ եղեւ ցա՛յն դժմիկ եւ ժան՝

Զի ելանելս 'ի վեր այժմիկ խաղ բըւեսցի :
 Հոգիքն եղեալ զինէն հասու՝ 'ի կլանելոյն
 Իմոյ ոգի , զի սակաւին ողջ էի ես ,
 Այլագունեալք իմրն եղեն զարմանալեօք :
 Եւ որգունակ առ որ կլրէ ըզձիքենին
 Բանբեր՝ դիմէ ամբոխ լրսել ըզնորալուս ,
 Եւ ոչ լինի ոք անձնապահ 'ի խուժելոյ .
 Պըտուցեալ նոյնպէս յերեսս իմ հայեցան
 Այնոքիկ երջանկալիր հոգիք համայն ,
 Գոգցես անյուշք երթին խրեանց յամբըմանալ :
 Տեսի ըզլի ոք յայնցանէ մասչել յառաջ
 Առ զբրկապինդ լինել ընդ իս այնպէս անձկով ,
 Զի արծառձեաց եւ զիս առնել 'us օրինակին ,
 Ո՛վ հոգիք դուք ունայնք , քա՛ն 'ի տեսլենդ :
 Երիցս ըզձեռս յեսս 'ի քիկունսն ձրգեցի ,
 Եւ դարձան երիցս 'ի լանջս իմ այնոքիկ :
 Զարմացումն իմրն կարծեմ փայլեցաւ յիս ,
 Քանզի բստուերն ժրմեցաւ եւ գնաց 'ի բաց ,
 Եւ ես ըզճէս իւր պընդեցայ փութանակի :
 Քաղցր եւ ալու բարբառեցաւ զի կասեցայց :
 Անդ ծանուցեալ ո՛վ ոք իցէ , աղաչեցի
 Վայր մի կացցէ զի խօսեցայց ես ընդ նրմա :
 Եւ նա յաւել . Զոր օրինակ սիրեցի զեզ
 Ի մահացու մարմնի , սիրեմ նոյնպէս յոժեալ ,
 Վասն որոյ կամ . սակայն դու յո՞ դիմեալ երբաս :
 Կազէլլայդ իմ , կըրկնեցի . առ ի դառնալ
 Միւսանգամ յաշխարհ ուր կամս , առնեմ ես զա՛յս
 Հանապարհ . այլ զի՞ կորեան այսչափ քո ժամք :
 Եւ առ իս նա . Զեղեն զբրկանք ինչ ինձ բընաւ ,
 Եթէ նա ինքն՝ որ առնու ե՛րբ եւ զո՛ կամի ,
 Զըլացաւ զայս անցս յինէն բագում անգամ :
 Զի որոյ են իւրովին կամք 'us արդար կամաց ,
 Ապաքէն էառ յերից ամսոց հէտէ
 Անդիմադարձ՝ որ կամեցաւ . ոք միտանել :
 Ուստի եւ ես՝ կացեալս յափին ակընկալեօք ,
 Յորում տեղոջ ջուր Տիբերի խառնի 'ի ծով ,
 Սեռն սիրով առ 'ի նմանէ ամփոփեցայ :
 Ի բերան գետոյն ըզթեւսն արդ նա պարգեաց .

Քանզի այդէն հանապազօր համախմբին
Որք 'ի վայր ոչ իշանեն յԱխտոն անդր :
Եւ ես . Թէ ո՛չ բառնան օրէնք նոր առ 'ի քէն
Ըզիշտասակ կամ սովորոյք սիրուն երգոց ,
Որք գիտէին համբուն ըզկամս իմ ամոռել ,
Շնորհեա զնոյն , առ 'ի սփոթանքս սակաւութ
Հոգւոյ իմոյ , ր 'ի մարմնի եկեալ այսէն
Ի տեղիս , եւ կարի յոյժ է տալտապեալ :
Սեր՝ որ ք' յիս 'ի խորհուրդս իմանալի ,
Ըսկըսաւ անդ նա յայնժամ այնպէս քաղցրիկ ,
Զի քաղցրութիւնքն տակաւին յանձն իմ հընչէ :
Պէտն իմ եւ ես , եւ գումարտակն որ քնդ նրմա ,
Այնպէս հըրճուեալք եւ բերկրալից երեւէաք՝
Զի բուէր քէ ա՛յլ ինչ չունիցի ոք 'ի խորհել :
Կայաք համայն յակնիոս յայթիոսսառ դայլալիկան ,
Եւ ահ՝ անդուս աղալակեաց բզգօնամիտն
Ալեւոր . Զի՞նչ իցէ այս , ոգիք դանդաղ .
Հի՞մ յուլանալ , ընդէ՞ր այսպէս կալ դադարել :
Արի՛ք 'ի լեառն առ մերկանալ ըզկեղեւանալ ,
Որ արգելու ձեզ ըզտեպին տատաւածային :
Զոր օրինակ կան աղաւնեակք հարօրացեալք ,
Արմբիս հաւաքելով եւ կամ որումն ,
Հանդարտիկ , առանց բընիկն յոխորտութեան .
Եւ քէ ինչ մի երեւի ինքեանց խուճապ ,
Իսկ եւ իսկ բոլորն ըզկերբն լրբանեն ,
Վարանեալք 'ի մեծ տագնապ տարակուսի .
Սոյնօրինակ տեսի զամբոխքն նորահաս ,
Զի երով զերզն եւ ընթացաւ ընդ զառ 'ի վերն ,
Որպէս ոք զնայ եւ չըզիտէ զելս ընթացիցն .
Այսպէս հապանեալ եւ բաժանումնքս մեր եղեւ :

Թարգմանեաց

Հ. ԴԱԹԻԹ Վ. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ



ԳՐԱԴԱՏԱԿԱՆ

ԹՈՒՐԲԵՐԷՆ

Երբ մատեան մը հրատարակելէ, հեղինակը կը փափաքի անշուշտ որ մասնագէտք իրենց կարծիքն յայտնեն, հարկաւ յօժարութիւն ունենալով լսելու թէ՛ նախատաւոր և թէ՛ աննպաստ դատողութիւններն :

Աշխատասիրութիւն մը թէ և բազմապատիկ առաւելութիւններ ունենայ, գրեթէ միշտ չի մնար զերծ նաեւ թերութիւններէ, զորոնք ծածկել եթէ լաւագոյն համարին թերեւս բարեկամներէ ունեւ երբեմն, զայն նոյնպէս ընել պատշաճ չեն դատեր անոնք, որոնք գրքին նախատակը գիտելով կը բաղձան, մանաւանդ թէ կը պահանջեն որ գոնէ սխալ փարգապետութիւններէ ազատ մնայ : Այս կերպով, կարծենք, թէ՛ հեղինակին անկեղծ բարեկամութիւն կը ցուցուի և թէ՛ հեղինակութեան կատարելութեան կամ բարւոյն կը նշատուի : Այս ակնկալութեամբ ահա և նոյն իսկ մատենագիրն տուած համարձակութեան վրայ վստահելով՝ ինչ ինչ գիտողութիւններ պիտի ընենք այն բառարանին վրայ, որ գովեստ միայն լսելու բախտն ունեցած է, ինչպէս հրատարակիչը կը վկայէ :

Սոյն կրկնահատոր փոքրագիր բառգիրքն, որ Dictionnaire Turc-Français, par R. Youssouf, Constantinople անունը կը կրէ, լատինագիր եւ թրքատառ է միանգամայն, որով մինչեւ ցարդ երեւցած թուրքերէն բառարաններուն վրայ առաւելութիւն մը կը ցուցնէ : Հեղինակին անունը թէ և արաբաձեւ է, բայց չենք կարծեր որ արաբական սերունդէ բլլայ : Մեր քննադատութիւնն այս անգամ կ'ամփոփենք այն փարգապետութեանց վրայ միայն, զորոնք մատենագիրն յառաջաբանով մը կ'աւանդէ թուրք լեզուի տառգանութեան մասին, զոր լաւագոյն էր թերեւս բոլորովին զանց առնել, և սլահել քերականութեան զոր պիտի յօրինէ, ինչպէս կը խոստանայ :

Թուրք լեզուն թէև գերմաներէն, յունարէն և այլ լեզուաց պէս չեւտական գանազանութիւններ չունենայ, ունի սակայն չեւտի այլ և այլ տարբերութիւններ, որոնց վրայ կարելի է ընդարձակօրէն ճառել: Իսկ մատենագիրն ասոնց գրեթէ ամենեւին յիշատակութիւն չ'ընէր հոն, ուր մանաւանդ չեւտողութեան նկատմամբ բրած վարդապետութիւնները՝ կա'մ սխալ են կա'մ անպէտ, ուստի և օգուտ բնաւ չունին: Ապացուցանենք այս մեր վճիռն որ թերեւս յանդուգն երեւի ոմանց:

Ուղիղ է երբ կը վարդապետէ թէ բառերուն վերջին վանկը կը չեւտէ թուրքերէնն ընդհանրապէս, սակայն անհիմն է երբ այս ընդհանուր կանոնը պարզ բառերու վրայ միայն կ'ամփոփէ: Վասն զի բառն եթէ՝ պարզ ըլլայ, եթէ՝ ածանցք և եթէ՝ բազմաբանութիւն՝ այն կանոնի ընդհանրականութիւնը չի խախտիր և միշտ հաւասարապէս վերջին վանկին վրայ կ'իյնայ չեւտն, այսպէս. սի'ւս, սիւս-նի'ւ, սիւս-նիւ-լի'ւ, սիւս-անա', գարննա' (= ինճէ դարն), կիւն-սի'ւ (=տիւզ կիւն) և այլն:

Շեւտողութեան ընդհանուր կանոնն աւանդելէն ետեւ՝ հարկ չկար ամենեւին այնպիսի մանրամասնութեանց իջնել, որոնք իրականութիւն չունին: Ուստի և ճշմարտութենէ շատ հեռի է՝ երբ հեղինակը կ'ուսուցանէ թէ սեռակիւնի հոլովակերտ վանկերն եւ սեռակիւնի մասնիկներն աւելի ուժով կը չեւտուին: Ամէն տաճկախօս կը վկայէ թէ էվի'ն (տան, տունդ) ճշգիւ այնչափ ուժով կը չեւտուի որչափ էվի', էվի' և այլն:

Գարձեալ, անկարեւոր դիտողութիւն մըն է երբ կը յարէ բառագիրը թէ պարզ բառին ծայրն եթէ այս ինչ կամ այն մասնիկը կամ գիրն աւելնայ, չեւտն այս յաւելուածին վրայ կ'իյնայ. վասն զի իրրեւ ընդհանուր կանոն դրուած էր արդէն թէ բառերն իրենց վերջին վանկերը կը չեւտեն:

Աւանդուած ընդհանուր կանոնէն քանի մը բառ իրրեւ բացառութիւն յառաջ կը բերուին, զորոնք հեղինակը պարզ կը համարի: Այո', թուրք լեզուն ունի շատ մը չեւտումներ, որոնք թէև ընդհանուր չեւտողութեան կ'անստատեն, սակայն միշտ որոշ կանոններով կը կատարուին, որոնց սակայն մատենագիրը բոլորովին անտեղեակ կ'երեւի: Իսկ իր-

րեւ բացառիկ նշանակութեամբ բառերուն մէկ մասը նախ պարզ չէ և բուն իսկ այս պատճառաւ շեշտողութեան կերպն այլալայն էն : Այսպէս նկրտեմք ($=$ նկ^ո-եմքտեմք), նաւոր ^{*} ($=$ նկ^ո-աւոր) : Նմանապէս չենք ըմբռներ ա'ի-ան-աւր, որ առաջին վանկը կը շեշտէ, պարզ ի^ոնչպէս կրնայ համարուիլ, երբ բառին թէ՛ սկիզբն ու թէ՛ վերջն ամենածանօթ յաւելուածներն ունի : Վերջապէս սօ'ն-րա (վերջէն) որ սօն (վերջ) բառին հետ սերտ յարաբերութիւն ունի, նոյնպէս հա'յ-սե, իրենց կազմութեան անպարզութիւնը գիւրաւ կը մատնեն : Կան ասոնց նման թուրքերէն բառեր, որոնք երկու ամբողջ բառի ամբողջութեամբ են հասարակօրէն և ա'յս միակ պատճառաւ ոչ եւս վերջին վանկը կը շեշտեն, այլ նախնիթաց մէկ վանկն որ բուն շեշտն ունի : Այսպէս նի^ոջին ($=$ նի^ո-իջին), շի'մսի ($=$ շո'ւ-իմսի), նաև ի'մսի և այլն : Նոյնպէս բացառութիւնք են պա'յաղը, ա'րքը ^{**} (ոչ եւս, այլ եւս), զորոնք սակայն հեղինակը չի գիտեր : Իսկ իւր նշանակածներուն մէջ կան այնպիսիներ, որոնք սխալ շեշտուած են, ուստի և զարտուղի չեն բնաւ : Չօ'պան, ճե'րեա, լն'լիքաւար, պա'յրաւ, պա'յսաւ, ինչպէս յայտնի է, առաջին վանկը չեն շեշտեր բառարանին մէջ գրուածին պէս, այլ, ընդհանուր կանոնով, վերջինը :

Հեղինակին ուրիշ մէկ սխալն ալ Ե տառին վրայ ունեցած անուղիղ գաղափարն է : Որչափ կ'երեւայ չի գիտեր թէ Ե, զոր ինք գաղղիներէն յսվ կը նշանակէ, ի ճայնաւորը չէ շատ հեղ, (այսինքն բաղաձայնէ առաջ ու վերջ), այլ յ բաղաձայնն ^{***} : Այսպիսի է և իւր յատաժ բերած ամէն օրինակներուն մէջ, ուստի և շեշտի վրայ ազդեցութիւն չի կրնար ունենալ : Հետեւապէս ուղիղ չէ հեղինակին բաժըր թէ յ (y) ունեցող բառերէն ոմանք՝ նոյն տառին նախընթաց, իսկ ոմանք հետեւորդ ձայնաւորը կը շեշտեն : Իրմէ

^{*} Մանաւանդ Թէ առանց ի ձայնի գրուելով եւ հնչուելով՝ նաւոր, պէտք էր կամ գոնէ կրնար միավանկ համարուիլ. այսպէս նաեւ խա'ր, դա'յր, զորոնք հեղինակն իրեւ զարտուղի կը դնէ : Այս միավանկ բառերն յետոյ հնչման զիւրացուցիչ ի մ'առնելով ալ, իրենց բնիկ շեշտը պահած են :

^{**} Ուրիշ է արքը'գ (աւելորդ) :

^{***} Թէեւ տեղ մը կ'ըսէ. l'y de sa nature n'est qu'une simple consonne. էջ 12 :

նշանակուած բոլոր բառերն բնդհանուր կանոնին համեմատ շեշտուած են :

Բայերու շեշտողութեան վրայ առանձինն գլխով կը ձառէ . սակայն ցաւով կը տեսնենք որ ոչինչ ուղիղ կը վարդապետէ : Բնդհանուր կանոնէն դուրս իրրեւ բացառութիւն տուածներն այնպիսի չեն : Սխալ է ըսել թէ թուրք լեզուի յաւելուածոյ (այս ինչ կամ այն մասնկով ածած) բայերը վերջին վանկին վրայ չեն բերեր շեշտն , այլ արմատին : Հետեւապէս անօրինակ կերպով շեշտուած են զօ՛րջանագ , զա՛-փաննագ , ե՛վրկնմեք , սօ՛գուշմագ , պի՛րսիրմեք և այլն : Այսպիսի շեշտողութիւնք անլուր են մայրաքաղաքիս մէջ : Միայն բացասական մա մասնիկն հասարակօրեւ այն ազդեցութիւնն ունի , ինչպէս եա՛զմանագ և այլն : Բայերուն շեշտին նկատմամբ բաւական գիտելիք կայ թուրք լեզուին մէջ , որոնց սակայն անգիտակ կ'երեւայ բառարանիս հեղինակն . իսկ այս մասին գրեթէ բոլոր ըսածը վրիպական է , այնպէս որ այդ գլուխն ամբողջ ջնջելու էր :

Սօսելով ձայնաւորաց դաշնակութեան վրայ որ թուրքերէն բառերու կազմութեան օրէնքն է , քանի մը հատ միայն յառաջ կը բերէ այն մասնիկներէն , որոց ձայնաւորները սոսկապէս ա և ե փոփոխութիւնները կը կրեն : Ինչպէս մագ , մեք . մա , մե . ճագ , ճեք . շար , շեք : Բայց ասոնցմէ զատ շատ ուրիշ մասնիկներ ալ կան , որոնք այս երկու կերպով միայն կը փոխուին : Այսպէս սագ , սեք . ագ , եք . սան , սեն . սա , սե . շա , շե և այլն և այլն : Ուրեմն աս ալ շատ թերի է :

Երբ բառը ձայնաւորով վերջաւորի և ձայնաւորով սկըսած մասնիկ մը վրայ գայ , դաշնաձայնութեան օրէնքը կը պահանջէ որ յ մէջ մտնէ . սակայն այս պաշտօնը և բաղաձայնն ալ կը վարէ : Թէ և պարսպը , բայց հաւ պարսանըն . նոյնպէս օ , օնուն , օնուն* և այլն :

Թուրքերէն կրկնաձայնից (diphthongue) վրայ խօսելով յառաջ կը բերէ շատ մը բառեր յով կապուած . սակայն

* Ասոնց մէջ և արմատական չէ , այլ լոկ ձայնի քաղցրութեան համար մտած է ներս , թէ և յետոյ իբրեւ այնպիսի նկատուած է , ինչպէս կ'երեւայ շանդար , պունդար եւ այլն ձեւերէն , ուր այդ ն յաւելուածին պէտք չկար հետեւորդ մասնիկը բաղաձայն ըլլալով :

ասոնք ի՞նչպէս կրնան կրկնաձայն համարուիլ երբ յ սոսկապէս բազմայն է, իսկ կրկնաձայնի համար անպատճառ հարկաւոր է երկու ձայնաւորի զոյգ հնչողութիւն միանդամայն : Եանազ, օյնազ և նմաններուն մէջ կրկնաձայնի հետք իսկ չկայ : Մանաւանդ թէ չսլիտի սխալինք եթէ ըսենք թէ թուրք լեզուն կրկնաձայն բնաւ չունի :

Հոս վերջ կ'առնուն մեր քննադատական դիտողութիւններն որ յառաջաբանի մէջ վարդապետուած շեշտողութեան վրայ ամփոփուած են : Մենք սխալը միայն մատնանիչ ըրինք, զանց առնելով յաճախ ուղիղ փոխանակել կամ սխալաւոր լրացնել որ մեր նպատակէն ու պաշտօնէն դուրս է :

Միտք ունինք քննադատական հայեցումածք մըն ալ արձակել բուն իսկ բառարանին բովանդակութեան վրայ, որուն թուրքերէն մասն ունի՝ ուղղելի կէտեր, զոր հարեւանցի տեսութեամբ իսկ կարելի է նշմարել :

Հ. ՍԵՐ. ՏԵՐՎԻՇԵԱՆ

ՊԻՍԻԴԵԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՎԱՐՔՆ

ԵԻ

ԻԻՐ ՎԵՅՑՐԵԱՅ ԴՐՈՒԱԾՔԻՆ ՀԱՅՏԵՐԼՆ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆՆ
ԵԻ ԶԵՌԱԴԻՐԸ

Գէորգ Պիտիդէս յոյն մատենագիրն է. զ զարու մէջ կ'ապրէր, Քրիստոսի 630 թուականին ժամանակները. սարկաւազ էր, դիւանապետ ու կնքապահ Կ. Պօլսի եկեղեցւոյն : Իւր ժամանակացոյց մէջ մեծ գրադիտի և հանձարեղ բանաստեղծի անուն ունէր : Դիտաւոր դրուածքն են Արշաւանի Հեռակի ընդդիմ Պարսից, — Արարական պատերազմն, — Վեցօրեայ, քերթուած տաղաչափեալ, յարում արարչագործութեան նկարագիրը կ'ընէ : Ունի նաեւ ուրիշ քերթուած մի ի վերայ ունայնութեան կեանց և Գովարանական ճառեր ի պատիւ Տիրամօր :

Փրեղ. Մարէլ յամին 1584 լատիներէն թարգմանեց և տաղաքեց Պիտիդէայ Վեցօրեայ արարչագործութեան քեր-

Թուածը. իսկ ի վերայ ունայնութեան կենաց քերթուածն, ինչպէս նաև նախընթացն, հրատարակեալ են ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՀԱՐՑ կոչուած հատորոց մէջ զանազան անգամ: Յետոյ 1777ին մեծադիր տպագրած է զայնս, մատենագրիս ուրիշ գրութեանքն հանդերձ, Յովսէփ Մ. Ֆոճճինի Բիւզանդական պատմութեան ժողովածոյին նոր Յաւելուածին մէջ 'ի Հըւսովմ, հմտակց յաւաճարանութեամբ և ծանօթութեամբ, զորս վերադին հրատարակեց ամենայն խնամով հանրածանօթ Հայրն Մինեը 'ի Մոնրուժ 1860ին: Ասոնք են գլխաւորապէս նշանաւոր թարգմանութիւնք և տպագրութիւնք իւր գրութեանց, զորս կը նշանակեն գրողք իւր վարուց:

Մեր ժրաջան նախնիք եւս Պիսիդեայ իւր ժամանակաց մէջ վայելած մեծ համբաւէն յորդորեալ թարգմանելու են Վեցօրեայ արարչագործութեան վրայ գրածը, որ յունարանական սճով խառն թարգմանութիւն մի է, և ոչ ճիշդ ամենութեք եւ հաւատարիմ ընդ բնագրին. բայց մեծապէս յարգի է միշտ իւր հնութեամբն, իրբն ընտիր աւանդմեր նախնեաց գրասիրութեան, մանաւանդ Բնական պատմութեան վերաբերեալ այլ և այլ բառեր բովանդակելուն համար: Սակայն իւր կշիռքն յայտնի է թէ չստ պիտի աւելնար եթէ ամբողջութիւնն անթերի հասած ըլլար առ մեզ, առանց այն սրկատաւոր մասանց որոց կը հանդիպինք ուրեք ուրեք, եւս առաւել 'ի վերջոյ: Թարգմանիչն անծանօթ է. բայց հաւանական է զՍերիոս Բագրատունեաց եպիսկոպոսն կարծելը, որ ժամանակակից էր Պիսիդեայ, և գրած է նաեւ Պասմուքիւն 'ի Հերակլ, կամ Պասմուքիւն Հերակլի կայսեր, օգտուելով անշուշտ 'ի Պիսիդեայ:

Մեծարոյ Անտովեան Հարց ձեռագիրն յորում կը գրտնուի Պիսիդեայ Վեցօրեայ արարչագործութեան քերթուածին հայերէն թարգմանութիւնը՝ յիշատակարան մ' ունի այսպէս.

Օրինակեալ է գիրս 'ի Տիգրանակերտ Բաղափի ձեռամբ Պաղոսի գրչի 'ի բուին Հայոց ՌՃԾ յամսեանն Յովսիսի 'ի գիր հօսր:

Ձեռագիրն թուղթն բամբակեայ է՝ բայց մագաղաթի նման. գրութիւնն ընտիր: Իւր մէջ կը պարունակէ՝ բայց ի Պի-

սիգեայ՝ Վեցօրեայ արարչագործութեան գրքէն՝ ուրիշ
թարգմանածոյ գրութիւններ և մարգարէից մեկնութիւն-
ներ ևն, յորոց գլխաւորն է Ս. Բարսղի Մեկնութիւն վեցօր-
եայ արարչութեան աւուրցն, զանազան տեղ տարբեր 'ի Ս.
Ղազար Վենեակոյ տալագրութեան, և արժանի այն գովես-
տից զոր մանր քննողութեամբ կու տայ այնմ Պ. Նորայր Բիւ-
զանդացի « Հայկական բառաքնութիւն » գրքուկին մէջ (*) :

Ահաւաստիկ ձեռագրին ընդհանուր բովանդակութիւնն
ըստ իւր ցուցակին :

Ա. Գիրք Վեցօրեից քարզմանեալ 'ի շատին քարքառոյ
ձեռամբ Բարթօլոմէոսի եպիսկոպոսի ֆաղափն Մարաղոյ
Հռովմայեցոյ :

Բ. Գիրք դժոխոց . (նոյնպէս Բարթոլոմէոսի) :

Գ. Գիրք վասն Բանին մարմնացելոյ . (նոյնպէս) :

Դ. Սրբոյն Բարսղի մեկնութիւն վեցօրեայ արարչու-
թեան աւուրցն :

Ե. Լուծմունք հարցոյց Բարսղի :

Զ. Պատասխան եւ լուծմունք պահոց Բարսղին :

Է. Մեկնութիւն ընթերցուածոց զոր արարեալ է Գրիգոր-
իսի Արշարունեաց ֆրեպիսկոպոսի :

Ը. Պիսիպեայ իմաստասիրի Վեցօրեայ :

Ի Բարթոլոմէոս եպիսկոպոսէ թարգմանեալ առաջին
գրութեան մէջ գլխաւորապէս կը յիշուին Պատմական եւ
Արիստոտէլեան վարդապետութիւնք : Հայերէն չարագրու-
թիւնն ըստ բաւականի յստակ է, առանց չառ ունիդորա-
կան խորթութեանց :

Ի վերջէ ձեռագրին նոյն թարգմանիչն յարած է այս-
պէս .

« Այլ զի քէպէս ստուածային գիտութիւնն է զարմանալի ,
բայց սակայն գիտութիւն վասն գործոց վեցից աւուրց արար-
չականին է զարմանագոյն : Եւ զի Մովսէս զսեղծումն աշ-
խարհիս յոյժ համառօտ եւ անյայտարար աւանդեաց , վասն
այսորիկ եւ սուրբն զվեց աւուրցն արարչութեան զանազան

(*) Տես Հայկական բառարանութիւն երես 61 :

կերպիւ եւ ազգի ազգի մեկնութեամբ գրեցին: Վասն ստեղծման էիցս արտաքին ֆիլօսօֆօսֆն զանազան կերպիւ սխալեցան. եւ այսոքիկ ամենեքեան ցուցանենք թէ զիսուքիւնն որ վասն ստեղծման աշխարհիս՝ է յոյժ զարմանալի եւ նրբանայեաց: Վասն այսորիկ 'ի զանազան մեկնութեանց սրտցն հաւաքեցի զսակաւ բանս զայսոսիկ եւ կարգեցի 'ի մի, եւ Բարբօլիմէոս աղբաս, եպիսկոպոս քաղաքին Մարաղոյ, ազգաւ հռօմայեցի, բարգմանելոյ 'ի լատին բարբառոյն 'ի հայ լեզուս, 'ի փառս Աստուծոյ, եւ 'ի գովութիւն ընթերցողաց»:

Այս ձեռագիրս՝ իբրեւ սլարգեւ Անտովեան Մեծ. Հարց անցնելէն առաջ՝ Մեարապօլսեցի Խալիֆայ Եաղուսկեան ազգաստոհմին էր:

ՊԻՍԻԴԵԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՎԵՅՈՐԵԱՅ

Որպէ՛ս զի մեծ են զործք քո, Տէր:(1)

Սաղմ. ԶԳ. 24:

Եկի՛ր բերելով բեզ յանապատէ սրտէ 22
 Պտուղս մշակեալս 'ի քոյոյդ ցօղոյ.
 Քանզի ոչ էր 'ի դէպ փշօք զանգելոյ
 Անձին մշակել խորհրդականի բանի հասկ,
 Եթէ ոչ հատեալ քո զփշոցն աղտեղութիւնս
 Հաներ կամ խրեցեր, և կամ սրագունիւ
 Քոյոյդ աղօթիցդ խոսանացուցեր սրով:
 Այլ ով երկրագործդ վիմաց և մորենեաց. 41
 Զի սերմանես դու և ի վերայ վիմաց յորովակի,
 Եւ զաւակս ծնանել բոնագատես զփուշս,

(1) Զիք 'ի յոյն բնագրին այս բնաբան:

Բուսուցանել պտուղս արժանաւորես եւ զապաւածս : ⁽¹⁾
 Եւ 'ի Թռչնոց անյայտից Թռուցելոց՝ հչինչ
 Ի քոյոցդ աստուածայնոց սերմանց քաղեսցէ :
 Արդ՝ ուռզեան զմեզ հոսամբ արտասուաց ,
 Թերեւս լիցի զաւակ 'ի յամլոյ ,
 Դարձեալ եւ պտուղ իմաստուն յանպտուղ սրտէ :
 Եւ վասն զի փախչիս 'ի գովեստից՝ իբր 'ի պարսաւանաց 50
 Ըստ դիտմանս զակնարկութիւնս ձկտեալ
 Ասացից 'ի քոյսդ յուսացեալ աղօթից տէգս :
 Արդ՝ աղբիւր բնաւորեցաւ բանի մի ,
 Բայց երակբ բազումք անյայտից ականց .
 Որովք Դաւիթ ոռոգանէ զամենայն միտս ,
 Զայտսիկ գրոյ բղխելոյ հոսմանս :
 Որպէ՛ս զի մեծ է Աստուծոյ ստացուածոցս
 Արարչագործ եւ իմաստուն ամենագթածութիւն : 58
 Արդ ո՛ղ իմաստունդ օտարասերմն բանից՝ 79
 Լճւր Պրոկղ՝ եւ մի նոխաբաներ :
 Զի 'ի քո պատճառ դիտմանդ տալոյ
 Լռեսցեն Պրոկեղք , եւ խօսեսցին վայրաբնակք :

ՅԱՂԱԳՍ ԵՐԵՆԻ

Ո՛ր զմշտաշարժ երկնի բնութիւն ⁽²⁾ 87
 Գնդաձեւ իմաստնագործ ձեղունացն՝
 Բարձրութեամբ լայնացեալ , եւ այսքան հաստիւր
 Խարխիս եղեալ , յոչնչի կառուցեալ :
 Որպէս խորան զգունդն ձգեաց . 90
 Քանզի քո Որփեւն զաստուածաբարբառ տալիդն

(1) Յոյնն՝ զսասսակս :

(2) Ի լուսանցս օրինակին եղեալ է՝ Դիսէլի ե քէ առ
 Պրոկղ ունն յարսափին խնասաւիրացն ձկտի :

Հարկանելով Դաւիթ խորան ասաց զգունդն ,
 Պրկեալ ըստ երկայնութեանն . և զխորութիւն
 Պարզութեանն 'ի բարձունս մարմնոցն :
 Եւ կամ ծխոյ նմանութիւն ունելով սմա ,
 Նախահայեաց սրատեսութեամբ ոմն ասաց
 Ըստ աղօտաբար ակնարկութեան տեսութեանն . . . 98
 Կամ զունդ կիսակտուր հեցի օրինակաւն 100
 Բարձրացեալ 'ի վեր կոյս և կորացեալ :
 Կամ ըստ նմին 'ի վայր բերմանն
 Յանժանօթաբար շարժութեանցն ⁽¹⁾
 Ի ներքուստ կուսէ սյլ երեւի թաքուցեալ .
 Սակայն ունի հաստատութիւն զառ 'ի քէն խարխախն ,
 Ի վերայ անհաստատ հիման հաստատեալ :
 Քանզի 'ի վեր ամբառնայ և խորանայ 'ի վայր , 107
 Եւ պարզի ըստ ճորութեան 'ի լայնութիւնն ,
 Հաւասար շուրջանակի զմեկուսութիւնն ունի :
 Կայիւք փախչի , և շարժիւք կնյ մնայ : 110
 Կայս զշարժութիւնն ունի անճառաբար .
 Ընթանայ հանդերձ ամենայնիւ զհակառակն՝
 Որպէս զի մի գոյգ շարժութիւն վարուցն
 Մղումն ինչ կրելով 'ի վայր կործանեսցի 'ի կարգէն :
 Քանզի հակառակ ընթացիցն՝ վայելչաբար 115
 Երագութեամբ , եւ շուրջ ընդդիմացեալ
 Ունի զպնդութիւն վարուցն . զի մի գուցէ
 Ի վայր եկեսցէ բերմանն ուժգնութիւն
 Թափմամբ սուր ընթացիցն :
 Այլ որպէս շաղկապ ինչ ընդդէմ պնդեալ 120
 Հակառակ հոլովիւքն շարակալեալ լինի վաղվաղմամբն ,
 Հիմամբ ընթացիւք , եւ բերման կառուցմամբ :

(1) Բառս շարժութեանցն եղաւ ըստ օրինակի Ս. Ղազարու
 վանուց : Տես Բագրևազեայ 1875 , երես 123 :

Է՛ ամենայն ծայրագունից ծայրագոյն .

Սահման է ամենայն սահմանաց , 125

Մեկուսի է ամենայն մեկուսեաց ,

Ոչինչ է սորա չափ , բայց անչափութիւն :

Յայտանէ հրաշացեալք ընդ սահիւրն , [բարձեալ,

Որպէս ընդ արձակ , ընդ անբովանդակելի , եւ ընդ ամ-

Առասպելս իմն ստեղծին բանդագուշեալ աշխատութեամբ ,

Երկայնա ինչ 'ի ներքոստ հաստատեալ սիւնս , 130

Թերեւս երկայն խորութիւն անյայտութեանն

Սիւնս ինչ անյայտս , տպաւորեալ ստեղծուածոց :

Քանզի մեծ է որպէս Աստուծոյ փոքր աթոռ .

Կամ գնացս յարուցեալ , որոյ յոգնումն ոչ գոյ .

Մինչեւ զարարեացէ որ կառոյցն գնա , բան : 135

Զգենու զպատմութեանն մեծ ,

Զօր , կրկեալ կկոցաւ սքանչելեալ :

Հեղեալ ճաճանչեղ եւ նուրբ հոսմամբ ,

Սահեալ մտեալ յամենայն մարմնեղէնս :

Յառաջ զայ փեսայաբար պտակեալ . 140

Առեալ մարգարիտ պայծառ՝ զաստեղս ,

Ունի եւ 'ի լանջսն կարկեհան մի ,

Որպէս հուր փայլակեալ առ տիւ :

Իսկ անլ սպիտակ հրատեսակ առ ոտան կոյս , 145

Յուցանելով սպիտակ ամենայն ուրեք զգիշերն .

Արգելեալ ունի զամենայն որպէս 'ի բանտի ,

Պահէ պարապեալ զտարերս ամենայն :

Ծոց լինի ամենայն շարժնոցս ,

Հասանէ ամենայն շարժմանց , ընդ նմին շարժելով զամենայն :

Ի միջի բերէ զերկիր իբրեւ զկէտ մի , 150

Ի վերայ ոչինչ կառուցման կառուցեալ :

Պատէ զանդունդս որպէս 'ի խանձարուրս .

Շաղի զամենայնիւ որպէս զուռկանաւ .

Պնդէ զամենայն , ընդ ինքեան ունելով միայն , 155

Որ զայնքան աշխարհս արգելեալ 'ի ներքս՝

Արտաքուստ կուսէ ինքն լինի պնդեալ լայնութեամբ :

Ձի չափի երկին անչափութեամբ ⁽¹⁾

Եւ առ քեւ կէտ մի է անձուկ :

Ո՛հ հնարագործդ բազմաշուք յարկիդ՝

160

Ձի սքանչելի վայելչութեամբ զծագրեալ զձեղունն

Քո արուեստիւդ յարկես զստորինս ,

Եւ զպանդուխտս ընդ երկնի յարկաւ ,

Ձեռուցանելով եւ խարուկելով զօդս :

Սակայն ոչ կիզուլ ջերմութեամբն զարարածս :

165

Այլ որպէս թուեցաւ քեզ պատշաճել զամենայն բնութիւն ,

Եւ զանյայտ էութիւն հրեշտակաց :

Կամ հոգիացուցեալ , կամ սրագոյն բոց .

Ձջերմութիւն նոցա եւ զարութիւն տրամադրեալ :

Կամ չորեքկերպեան ձեւով կենդանի պատկեր՝

Ձկարծրութիւն նոցա կենդանագրելով եւ զզանազանութիւն :

Կամ զբազմութիւն աչաց նոցա բացելոց ,

Որպէս զի զլոյսդ յայտնագոյնս տեսցեն .

Եւ մի գանխւանալ ՚ի ստորինս շարժելոցս :

175

Քանզի քեզ մատուցանեն զերգս՝ որպէս յաղթողի՝

Քերորէք եւ պետութիւնք եւ զինուորութիւնք ամոռոց ,

Եւ ամենայն սերորէք անշարժ երազութեամբ

Կայիւք թռչին եւ կառուցմամբ ընթանան :

Եւ երկրքին թեւօք զերեսացն

Ծածկեն տեսութիւն : Իսկ երկուքն զոտս

180

Եւ երկուքն ՚ի բարձունս թռչին մեծս :

Եւ զերեքլուսեան սրբութեանն երգս

Միոյ տէրութեանդ պատշաճեն պաշտօն :

Յուցանելով բարւոք ժողովունս որոշմամբ :

Եւ ժողովմամբ տեսանելոյ բանին ,

185

(1) Եղաւ ըստ Ս . Ղազարու օրինակին , Համաձայն յոյն բնագրին . Տ . Բազմավէպ 1875 եր . 123 : Ի ձեռագրի Անտոնեան Հարց գրեալ է՝ Քանզի չափ երկնի :

Անշատաբար զսոսնձնաւորութիւնն պաշտել :
Եւ միաւորութեանն երկրպագութեան
Յայտնաբանական յստակել զուղղափառութիւն .
Զարբութիւն Բանին մարմնացեալ .
Ոչ տահիլ 'ի յայլացեղ չորրորդութիւնն . 190
Այլ մի դէմ , եւ աստուածութեան մի .
Եւ նախ քան զմարմինն օրհնել . և մարմնով
Զբանն զնոյն՝ մարդ եւ Աստուած բնութեամբ .
Ոչ յաւելուածով շփոթեալ , եւ ոչ անշատմամբ : 195
Սակայն չարչարեալ՝ այլ ոչ փոփոխեալ շփոթմամբ ,
Կրկին զմեկին , առանց խառնակութեան :
Ո՛ր առ զեղեցկութիւն 'ի բարձունս սուացուածոցն
Բռւրաստան տնկեալ աստեղաց բազմաց ,
Զգիշեր զարդարեցուցեալ եւ զգեցուցեալ զտիւ ,
Զլոյս մաքրեալ եւ թխացուցեալ գերեկ . 200
Հուր մշակեալ եւ սերմանեալ ջուր ,
Զհասարակաց պիտոյիցն զանձարան :
Շարայարեկի

ՈՒՂՂԵԼԻ

Պատկեր Թիւ 1 , էջ 23 տող 12րդ , պէտք է կտրուի՝ յիշու
սիոյ Ամերիկայի Մաֆեսի եւ ուրիշ գիտնորդ եւն :

